

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չը հրատարակված պատերազմ — Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայաստանական հո-
սանքները. Նախակ Բազմաբ. Նախակ էջմիած-
նից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Չինական գործերը. Նամակներ ցուցա-
հանդէսից. Առաքելի լուրեր.—ՀԵՌԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Հայկական սպառնալիքներ:

ՉԸ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Եւրոպական պետութիւնները Նապո-
լիոնի և Միացեալ-Նահանգների հետ
միասին կանոնաւոր կերպով պատե-
րազմ են մղում Չինաստանի դէմ,
բայց մինչև այժմ պաշտօնապէս պատե-
րազմ չեն հրատարակել: Պատերազմող
կողմերը փոխադարձաբար միմեանց հասցե-
ւում են շատ խիստ հարուստներ: Բազմա-
թիւ վերաւորների և սպանվածների ցու-
ցակները օր օրի վրա աւելանում են: Այդ
բոլորը իսկական պատերազմի աներկբայե-
րանքներ են: Սակայն դիպլոմատիան մինչ-
և այժմ խուսափում է պատերազմ
բռնի գործածութիւնից, խելացի համա-
րելով չինական գործերին տալ ներ-
քին խառնակութիւններ և բնաւորու-
թիւն, որովհետև պաշտօնապէս պատե-
րազմ հրատարակելը ունի իր մեծ, պա-
տասխանատու կողմերը:

Ինչպէս յայտնի է հեռագրիւններից, չի-
նական յուզմունքը մինչև այժմ դեռ չէ
տարածվել աւելի չինական մէջ:
Հարաւային Չինաստանը դեռ ևս հանդիսա-
ն է և հարաւային նահանգների փոխա-
քաները պահպանում են բարեկամա-
կան յարաբերութիւններ եւրոպացիների
և եւրոպական պետութիւնների հետ:
Պատերազմական գործողութիւնները կա-
տարվում են հիւսիսային նահանգնե-
րում և գլխաւորապէս Պեկինի մօտերը:
Քանի որ պատերազմ չէ հրատարակված
և ամբողջ գործին արված է ներքին երկ-

պառակութիւնների և ապստամբութեան
ընտանցութիւն, հարաւային նահանգները
իրաւունք ունեն չը խառնվել պատե-
րազմական գործողութիւններին և չեն
խառնվում: Իսկ եթէ եւրոպացիները
կը հրատարակեն պաշտօնապէս պատե-
րազմ Չինաստանի դէմ, այն ժամանակ այդ
երկրի բոլոր այն մասերը, որոնք մինչև
այժմ հանդիսաւ են, պարտաւոր կը
լինեն մասնակցել պատերազմին և պաշտ-
պանել իրանց պետութեան շահերը, պե-
տական գոյքը և պետութեան սահման-
ները:

Մինչև այժմ դեռ յայտնի չէ որոշակի,
թէ արդեօք եւրոպական զեւապանները,
որոնք գտնվում էին Պեկինում, անվտանգ
են մնացել, թէ նրանք ևս ենթարկվել
են զերմանական զօրազգ զեւապան Վեո-
տեների վիճակին: Եւրոպական զիւլումա-
տիան ջանք է գործ դնում չը զրդուել
չինական կառավարիչներին և ազատել
Պեկինում պաշարված եւրոպացիներին,
եթէ նրանք դեռ կենդանի են: Պատե-
րազմ չը յայտնելը դեռ մի յայտնի չափով
զապում է չինացիներին ծայրայեղ միջոց-
ների դիմելուց:

Պէտք է նկատել, որ եւրոպացիները
պատերազմ հրատարակելու համար իրանց
անպարտաւոր են համարում: Եւրաքանչիւր
պետութիւն ունի իր հաշիւները և իր
սպասելիքները Չինաստանում: Իսկ
պատերազմը աւելի իր լոգիկան և իր ար-
դիւնքները: Պատերազմը սկսելուց յե-
տոյ առաջ կը գտն մի շարք հարցեր, թէ
ինչ պէտք է անել Չինաստանի հետ եւ
որ պետութեան որքան ազդեցութիւն և
հովանաւորութիւն կարելի է վերապահել
Չինաստանում: Պատերազմը ուղարկած գոր-
քերի թիւը և նրանց կրած կորուստները
ու զրկանքները, պատերազմ մղելու հա-
մար ծախսած զուգործները, պատերազմի
ժամանակ կատարած յաղթութիւնները և
զրաւած տեղերի տարածութիւնը՝ կապ-
ված ընդհանուր քաղաքական հաշիւների

հետ՝ կը ստեղծեն բարդ խնդիրներ մի
զանգուած, որի ուղղութիւնից սարսա-
փում են պետութիւնները:

Սակայն իրերի դրութիւնը այնպիսի բը-
նաւորութիւն է ստանում, որ պետու-
թիւններից մի քանիսի համար պատե-
րազմ հրատարակելը անխուսափելի է
գտնում: Գերմանիան, որի զեւապանը
այնքան անխիղճ և անարժան եղանակով
սպանվեց, խոր կերպով վերաւորված է:
Ռուսաստանը, որի թաղաքներից մէկը, Բլա-
գովշչենսկ, ենթարկվել է չինացիների
կողմից ամբակոծութեան, անկարող է թող-
տալ, որ չինացիները յանգնեն առաջ-
խաղացութիւն գործելու դէպի պետու-
թեան սահմանները: Եթէ ճշգրիտ Պեկինի
մէջ եղած զեւապանների սպանութիւնը,
այն ժամանակ միանգամից մի քանի պե-
տութիւններ պէտք է համարեն իրանց
պատիւը ոտնակոխ եղած:

Դիպլոմատիայի համար ստեղծվել է մի
գիտարկ կացութիւն, որից անդուլթեամբ
զուրա պրծնելու համար պահանջվում է
մեծ հմտութիւն և հեռատեսութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Ֆ Ե Մ Ի Ն Ի Գ Մ

III

Համաժողովները (կօնգրէս) ամենալաւ մի-
ջոյններից մէկն են նոր հասարակական շար-
ժումների տարածման համար: Ձեւմիջութիւնները
չէին կարող ի հարկէ անուշադիր թողնել այդ
միջոցը: Եւ իրաւ, չը կայ մի յարմար առիթ,
որից նրանք չօգտվէին որ և է համաժողով
կազմակերպելու՝ իրանց զաղափարները ի լուր
աշխարհի հոգակիւր համար:

Հէնց նորիս Պարիզում, «Համաժողովների
պալատում», «Կանանց իրաւունքների և շա-
հերի պաշտպանները» կազմակերպեցին մի հա-
մաժողով «Կանանց գործերի և հիմնարկու-
թիւնների», որի ժամանակ, «Руч. Бѣломості»-ի
թղթակցի ասելով, մի գեղեցիկ գեղեցում է

կարգացել տիկին Բէրբէրեան թիւրքահայուհի-
ների և առհասարակ հայ կնոջ ստրկական
վիճակի մասին:

Բացի այդ համաժողովի նախաձեռնող բուր-
ժուա և ազնուական կանանցից, որոնք պատ-
կանում են չափաւոր ֆէմինիստների կուսակ-
ցութեան, ծրարսխայում կան և բազմաթիւ
արմատական ֆէմինիստներ, որոնց նախաձեռ-
նութեամբ անպատեհներին կայանալու է Պարի-
զում մի երկրորդ կանացի համաժողով կանանց
հարցը ամբողջութեամբ ընդգրկող ծրագրով:

Արդէն տեղի ունեցած կանացի համաժողովը,
եթէ զատելու լինենք ուսւ թերթի թղթակցի
հաղորդածի հիման վրա, բաւական անգոյն է
անցել: Բարձր բուրժուազիային և ազնուա-
կանութեան պատկանող ժամանակակից փրան-
սուհիներից աւելին սպասել թերեւս ևս անկա-
րելի էր, սակայն շատ նշանաւոր է հէնց ինքը
այն փաստը, որ այդ զատակարգին պատկանող
կանայք սկսել են գրավել կանանց շարժումով
և հետաքրքրվել կնոջ անտեսական դրու-
թեամբ: Սերմը ծելուց առաջ փոփոք է, և
կըր որ և է զաղափար սկսում է արձագանք
գտնել (յաճախ աղաւաղվելով) նոյն իսկ անհա-
մապատասխան շրջաններում—կը նշանակէ նա
մօտ է իրադրութիւնը:

Սակայն ֆէմինիստները չեն բաւականանում
զանազան պատահական համաժողովներով: Նը-
րանք ունեն և պարբերաբար տեղի ունեցող
«միջազգային համաժողով», որ գումարում է
նախապէս որոշված տեղում և ժամանակին
«Կանանց միջազգային խորհրդարանը»:

Կանանց առաջին միջազգային ժողովը տեղի
ունեցաւ Չիկագոյում 1893 թւին, երկրորդը՝
Լոնդոնում անցաւ ամառ, իսկ երրորդը՝ նշա-
նակված է 1904-ին Բեռլինում:

Գաղում ենք մի քանի տեղեկութիւններ
Լոնդոնի միջազգային համաժողովի մասին ուս-
տաց «Жизнь» ամսագրից, որ, պէտք է ասել,
բաւական տեղ է նուիրում իր էջերում կա-
նանց հարցին:

Համաժողովին մասնակցում էին պատգամա-
ւորուհիներ գրեթէ բոլոր երկրներից, որոնց
թիւում Ռուսաստանից, Աւստրալիայից, Կապի

թած տեղեկութիւնները արդէն բաւական նիւթ
էին տուել շահի ծրագրիւնների համար, և 1603
թւականին նա յանկարծակի հրաման տուեց
զօրքին արշաւել դէպի Թաւրիզ: Օսմանեան ա-
հաւոր այդ խորտակելու համար կար մի մի-
ջոյն—արաբ արշաւել, յանկարծակի բերել նը-
րան: Այդ տակիւրկան լիւրէի աղողվեց. կարծ
միջոցում Թաւրիզը պարսիկների ձեռքին էր,
իսկ նրանց առաջապահ զօրքերը գրաւել էին
Նախիջևանը: Ծառը մեծ հանդէսով մտաւ
Ջուղայ:

Արաքսի ժայռոտ ափի վրա հիմնված այս
գիւղաքաղաքը վաճառականական մի զարմա-
նակ ընդունակութեամբ հարուստ ժողովուրդ
ունէր իր մէջ և այն ժամանակներում կարող
էր ամեն մէկի նախանձը գրգռել: Ինչպէս էր,
որ կեղեքումների ու աղքատութեան դարում
երկրի մի անկիւնում կարողանում էր գոյու-
թիւն պահպանել մի անուտրական բարբաւած
կենտրոն—յայտնի չէ: Գիտնեք միայն, որ ջու-
ղայեցի հայը ամեն տեղ էր, ուր կար առեւ-
տրական մեծ շուկայ: Ջուղայից միաժամանակ
զուրա էին գալիս թէ մանրավաճառը, որ զա-
նազան ապրանքներ էր տանում չրջակայ գիւ-
ղերում և քաղաքներում ծախելու և թէ
այն վաճառականը, որ գործեր ունէր եւրո-
պայի նաւահանգիստներում և որի կարաւան-
ները անհուն տարածութիւններ էին անցնում:
Հատկանալի է, թէ ինչ անուն ունեցած պիտի
լինի ամբողջ Հայաստանում ձուլ և փարթամ
Ջուղան: Բայց լաւ վաճառականը վատ քաղա-
քագէտ է լինում: Ջուղայեցիները կամեցան
սպաշխել իրանի գահակալին, իրանց հարուս-
տութիւնները բայ անկող նրա առաջ: Ծառ-
Արաքս իսկ որ հիւսցած էր ևս այդ վաճառա-
կանների բոլոր գործերը լաւ իմանալու այն-
քան բարեկեցական ու մեղերմ ձեւացաւ, որ
նստում էր նրանց մէջ, ուսում խմում էր նը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ե Ր Զ Ա Ն

XVII դ ա Ր

I

Պարսկա-թիւրքական պատերազմները առ-
ժամանակ դադար առան XVI դարի վերջե-
րում այն պայմանով, որ Պարսկաստանից նուաճ-
ված Հայաստանը, վրաստանը և Ասորկասա-
կանի մեծ մասը անցնեն թիւրքիային: Բայց
բանից դուրս եկաւ, որ օսմանեան լուծը
պարսկականից շատ ծանր է և հայերը, գոնէ ա-
րեւելեան լեռնոտ մասերում ապրողները, ցոյց
տուին պատմութեան մէջ մի հազուադէպ ե-
րեւոյթ: Ռաջեան փորձում էր տարբերութիւն
դնել ճնշող լուծերի մէջ, փորձում էր անբա-
ւականութիւն յայտնել և իր համար երկու
չարիքներից փոքրագոյնը ընտրել: Այդ նպա-
տակով Ղարաբաղի և Գողթան գաւառի կող-
մից շատերը յօժար կամքով գաղթեցին գնացին
Պարսկաստան և Ծառ-Արաքսի սիրալիր ընդուն-
ելովութեան արժանանալով, բնակվեցան Արա-
հանում: Հայերի օրինակին հետեւեցին ևս շատ
վրացիներ: Բայց ուղեւորի այդ անմեղ փորձն
էլ անհուն աղէտների դուռ բացեց:

XVII դարի սկիզբը Հայաստանի մէջ ներ-
կայացնում էր մի այսպիսի տեսարան: Սով էր,
մէկը այն առեւելի սովերից, որոնք, այնքան
սովորական էին դարձել այդ քար ու քանդ
երկրի, մշտական պատերազմների արեւնոտ բե-
մի համար: Սովի հետ բռնացած էր ևս մի այլ
աղէտ, ամեն տեղ փայլած էին ջալալիների հրո-
սակաւորները, որոնք ասպատակութիւններ էին

անում, կողոպտում էին Դաւաղակային մի
ամբողջ հեղեղ էր և իր քաղաքները թիւնների
համար տապալել էր ընտրել կիլիկիայից մինչև
Արարատեան աշխարհը: Հաւաքվել էին զանա-
զան տեսակ գիշատիչ տարրեր. այդտեղ էին և
այն փաշաների ու կուսակալների, որոնք ապրա-
տանքում էին թիւրք կառավարութեան դէմ
և որոնց ձեռքի տակ հազարաւոր սպանուելու-
ված մարդիկ կային: Եւ ահա ժողովուրդի վրին
միմեանց վրա բարդվել էին օսմանեան լուծը,
որի անտանելի ծանրութիւնից ազատվելու հա-
մար շատերը փախել էին Պարսկաստան, սովը
և աւաղակ ջալալիները:

Կար եւ չորրորդ, անային դժբախտութիւնը:
Այդ սարսափելի ժամանակներում էջմիածնի
երկու կաթողիկոսները փախստական թափա-
ռում էին ժողովուրդի մէջ, աշխատելով տուրք
ժողովի իրանց խեղճ գլուխը ապրեցնելու հա-
մար: Նրանք չէին համարձակվում օրվայ լոյ-
սով զուրա գալ երկու օրից աւել չէին կարո-
ղանում մի գիւղում մնալ: Ամեն տեղ նրանց
հալածում էին պարտատէրերը և նրանք նոյն
իսկ անձնական պիտոյքների համար փող չէին
գտնում, քաղցած էին, թշուառ: Գրանցից մէկը
Դաւիթն էր. իշխանական փառախոսութիւնը
այդպիսի ժամանակներում էլ այնքան վատ էր
Քրիստոսի փոխանորդների մէջ, որ Մելիք-Եթ-
մանում մէկն էլ կամեցաւ նրա աթոռակիցը
դառնալ: Ընդունված սովորութեան հետեւելով,
նա կաշառքներ տուեց տեղային մահմեդական
իշխանին, որը և հարկադրեց Դաւիթը թէ այդ
հարկադրանքից ստիպված և թէ կամենալով
թիւթեւացնել իր զօրազգ զրուկները մի ընկե-
րակից ունենալով, կատարեց Մելիք-Եթի ցան-
կութիւնը:

«Երկու էին կաթողիկոսները և երկու—մըս-
խոյնները», ասում է Առաքել պատմագիրը: Եւ

ահա երկուսն էլ փախստական, իսկ չուրջը
սովից ու հարկեր ու մի անբաղդութիւններից
կիսամեռ ժողովուրդ: Վերջապէս նրանք համա-
ձայնութիւն են կայացնում—կաթողիկոսական
աթոռը տալ մի երրորդին, որ կարող կը լինէր
պարտքերը վճարել: Կար այդ ժամանակ մի
ունեւոր վարդապետ՝ Սրապիոն անունով, որ հա-
րուստ ժառանգութիւն էր ստացել ծնողներից:
Նա հրաւիրվեց կաթողիկոսութեան Բայց հէնց
առաջին հանդիպման միջոցին երկու կաթողի-
կոսների, նրանց հետ եղած կղերականների և
Սրապիոն վարդապետի մէջ անհամաձայնու-
թիւններ ծագեցին: Երկու կաթողիկոսները
ստիպեցին եղան հեռանալ Ջուղայից, ուր տեղե-
վել էին հարուստ և հեղինակաւոր Սրապիոնի
հետ, իսկ ժողովուրդը Սրապիոնին տարաւ էջ-
միւսին և կաթողիկոս ընտրեց: Միաժամանակ
երեք կաթողիկոս մի աթոռի վրա, որովհետեւ
ոչ ոք չէր ուզում իր փառախոսութիւնից մի կա-
թիլ պակասեցնել: Ընդհակառակն, Դաւիթն ու
Մելիք-Եթմը, չը կամենալով զրկվել կաթողիկո-
սութիւնից, վճեցին, որ իրանցից մէկը գնալ
Ծառ-Արաքսի մօտ: Պարզապէս յայտնի չէ նրանց
նպատակը, բայց Առաքել պատմագիրը շատ
տեղ ասում է, թէ զրանք էին այն թշուառու-
թիւնների պատճառ, որոնք թափվեցան հայ
ժողովուրդի վրա Փառաձով շարագործութիւնը
ընտրել էր այդ ձանապարհորդութիւնը մատ-
նութեան, հակառակորդներին տապալելու նպա-
տակով: Հայի դժբաղդութիւնը այս անգամ էլ
նրա տանից էր զուրա գալիս: Եւ արդիսի ա-
հեղ զօրազգութիւն:

Ծառ Արաքս, արեւելեան մի ընդունակ և
հասկացող բանակալի նուրբ նենդամութեամբ,
օսմանեան երկրներից փախածներին սիրալիր
ընդունելութիւն էր ցոյց տալիս և նրանց մի-
ջոյնով լաւ ուսումնասիրում էր բոլոր հանդա-
մանքները: Այդքան դժգոհ տարրերի հաղոր-

դում ևս չէր հաղորդում իր ընդունակ և
հասկացող բանակալի նուրբ նենդամութեամբ,
օսմանեան երկրներից փախածներին սիրալիր
ընդունելութիւն էր ցոյց տալիս և նրանց մի-
ջոյնով լաւ ուսումնասիրում էր բոլոր հանդա-
մանքները: Այդքան դժգոհ տարրերի հաղոր-

(Կր շարունակվի)

Շուտով կը կազմակերպվեն յատուկ երկաթուղիական գնացքներ Բաթումից մինչև Պետերբուրգ արագ հաղորդակցութեան համար: Գնացքը կանցնի Թիֆլիսի վրայով մինչև Բաթում և այնտեղից, Բաթումի կայարանի և Պետերբուրգի վրայով, կուղղվի դէպի Պետերբուրգ: Այդ գրեթէ անընդմիջ ճանապարհը կը լինեն Վոլգայի և Կասպի ծովերի միջև: Նրանք կը գնան առայժմ չարաքի միայն մի անգամ:

Թարգմաններու բժշկ. ունենալու կարևորութիւնը օրից օր աւելի և աւելի զգալի է դառնում: Ներկայացուցին ժամանակի շատ անգամ լինում են տկարութեան դէպքեր թէ ֆիզիքական և թէ հոգեկան պատճառներով: Մեծ թարգմանները, որոնց թուում և թիֆլիսի արքունական թատրոնը, արդէն հոգացել են յատուկ բժշկներ հրաւիրելու մասին՝ ներկայացումներին ներկայ լինելու համար: Այժմ, ինչպէս յիշուած է, ղեկավարութիւն կա պարտաւորեցնել բոլոր թատրոն պահողներին հրաւիրելու ներկայացուցիչներին մի բժշկ և մի ֆէլդշեր:

Չերսոմբեան շրջանում պրոֆէսոր Կարըշով կազմակերպել է գործնական դասընթաց՝ այդպէս գործողութիւն և վազապահութիւն սովորեցնելու նպատակով: Երկրագործութեան միջնադարէրէն այդ դասընթացի կազմակերպութեան համար յատկացրել է 300 ռուբլի նպաստ:

Մեծ գրում են Մոսկովայից: «Մամուլի տակ են և չուտով լոյս կը տեսնեն ստանձնին գրքերով պ. Աւետիս Դանթոնեանի վէպերները թիւթապատի կեանքից: Այդ վէպերներից շատերն արդէն տպւած են եղել «Մշակում»: Հրատարակիչն է տիկ. Վ. Քանանեան:

Թիֆլիսում յուլիսի սկիզբն անցաւ բաւական զով, բայց ահա մի քանի օր է, որ տիբրում է ամառային շոք:

ԷՄԻԱՆՆԻՑ մեզ հետագրում են յուլիսի 11-ից: «Այսօր ինչպիսի վարդապետ Դատեան Ս. Գրիգոր Զուրաբովի վանքի աւերակներում գտաւ մի սեպտիմա արձանագրութիւն 47 տողից, երկարութիւնն է երեք արշին, լայնութիւնը՝ 14 վերջուկ:

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են: «Երէկ, ամսիս 9-ին, Գօրու. Ս. Ստեփաննոս եկեղեցում, պատարագից յետոյ, խուռն բազմութեան ներկայութեամբ, հանգիստաւոր հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ երդուեալ հաւատարմատար Գարեթի Տէր-Ստեփաննոսի համար: Նախ քան հոգեհանգիստի սկսվելը՝ երկուստեք բժիշկ պ. Տատեան խոր զգացված, ազգու. և չնորհալի առեւտրականութեամբ գծագրեց հանգուցեալի գործունէութիւնը, չեչուելով նրա մարդասէր և դարափարական բնաւորութիւնը:

Գօրու գաւառի ԱնՍԱՔԱՒԱՔ գիւղից մեզ գրում են: «Անցեալ չարաքի այստեղ էր եկել ուսումնարանական վարչութեան ներկայացուցիչը տեղական դպրոցի հարցի առիթով: Այս զբոսը համար 200 ր. նպաստ է խնդրած կառավարութիւնից: Յովհաննէս անգլ. քահանայ Տէր-Գալստեանն էլ զիջեց իր հոյակապ չիւնութիւնը ձրիաբար դպրոցի և ուսուցիչների բնակարանի համար, ի նկատի ունենալով իր ծխականների չքաւոր գրութիւնը:

ԱնՍԱՔԱՒԱՔ մեզ գրում են: «Հացի բզէց և հոթենութեան բաղժիջի զանազան տեսակները այս տարի աւելի մեծ քանակութեամբ կրեւացին մեր գաւառի հացաբոյսերի վրա և նոյն շրջանում, որտեղ երեւացել էին անցեալ տարի, այն է՝ Վախան, Մուրճախէթ, Չանդուրա, Գիւմրի, Դիլիսի, Խոստի, Օրճա և մասամբ Բալթա ու Սանգու գիւղերի այդ տեղում: Սկզբից անձրեւների ժամանակ, արդէնքերը, գետնի երեսին, հացաբոյսի ցօղունների ներքեւի մասն էին փչացնելիս եղել, իսկ յետոյ, երբ անձրեւները դադարեցին, ներքեւ մեծ քանակութեամբ բարձրացան հասկերի վրա և մեծ աւերակներ գործեցին: Մի գիւղացու ինձ մօտ բերած մի երկու հասկերի վրա տասնեակ բզէցներ կային:—Բացի դրանից և դարձան երկարատեւ անձրեւների վնասելուց՝ յունիսի կարծառու երաշտն էլ բաւական վնասեց և համարեա ոչնչացրեց այդ գիւղերի արտերը, որովհետեւ, ինչպէս ասացինք, հացաբոյսերի ցօղունների ներքեւի մասերը սաստիկ վնասուած էին, գիւղացիները բնակելով, այդ վնասակար բզէցների չնոր-

հիւ, բայց գուցէ և ուրիշ պատճառից, այնպէս որ յուլիսի սկզբի մի քանի օրուայ անձրեւները բոլորովին չօգնեցին այդ չրջանի արտերին: Այդ պատճառով վերեւ յիշած գիւղերը այս տարի հացի և դարձանի մեծ պակասութիւն կուենան: Բայց այդ գիւղերի արտերը և ընդհանրապէս ամբողջ գաւառի խոտաբերը ատոս հունձ են խոտանում, եթէ պատահար չը լինի: Պէտք է լուրջ մտածել այդ վնասակար բզէցների առաջն անհետ մասին: Այդ միջոցները դէմ կուրելու համար՝ պէտք է բրոշուրներ թարգմանաբար տարածել ժողովրդի մէջ, որ ժողովուրդը ինքը խելացի և նպատակաւոր մար կուի մղել իր բարօրութիւնը ոչնչացնող թշնամիների դէմ և ոչ թէ այդ բոլորը Աստուծոյ պատիժ համարելով՝ ձեռքերը ծալած նստի: Շատերը միակ նպատակաւոր միջոցը համարում են արտերի վտակը, բայց գուցէ առանց այդպիսի մեծ գոհողութեան էլ կարելի լինի հացի բզէցի և հոթենութեան բաղժիջի առաջն անհետը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Չինաստանից հասած տեղեկութիւններին, թէ օտարազգի զեւպաններ ողջ և առողջ են Պեկինում և գտնվում են կառավարութեան հովանաւորութեան տակ, եւրոպական լրագրիչները թերահաւատութեամբ են վերաբերվում Անգլիական «Daily Mail» լրագրի զինուորական թղթակիցը յուլիսի 2-ին ուղարկած հեռագրով հաւատացնում է, որ զեւպանները և բոլոր եւրոպացիները, առանց որ և է կատարածի, կոտորված են Պեկինում յունիսի 23-ին:

«Ես տեղեկացայ, գրում է նա, որ յունիսի 12-ից յետոյ՝ բոլոր զեւպաններն և կայսերական զօրքերը սկսեցին հեռագրեւ թղթաւ նալ անգլիական զեւպաններն շուրջը՝ բանակ դնելով՝ փողոցներում և հրապարակներում: Դեպքանտան սակաւաթիւ պահպան գիւնդները ամեն օր դուրս էին գալիս զեւպանատան շինութիւնից և կուի բռնվում պաշարողների հետ: Առանձնապէս աջող էին գիւնդների կոխները:

«Եւրոպական փոքրաթիւ զօրաբաժնի եռանգն ու քաջութիւնը այն ատիճան մեծ էին, որ նրան աջողվում էր աստիճանաբար յետ մղել և հետո պահել չինացիներին զեւպանատան շինութիւնից: Այս պատճառով պրինց Տուան վճռեց կանոնաւոր գիւնդային յարձակումն գործել զեւպանատան վրա: Պաշարող զօրքերը ստացան նոր և առատ ռազմամթերք հրացանների ու թնդանթների համար և չինական զօրապետները, զինուորական ընհանուր խորհրդի ժամանակ, կազմեցին երեք զօրեղ զօրաւորներով և պահեստի զօրքով յարձակում գործեցին նախագիծ:

«Յուլիսի 6-ին (նոր տօմարով) չինական թնդանթները սկսեցին հաւաքուր կրակ թափել բրիտանական զեւպանատան վրա, որտեղ հաւաքված էին բոլոր եւրոպացիները: Ռմբակոծութեան սկզբից երկու ժամ անցած՝ զեւպանատան պարսպապատի մէջ պատառուած բացվեց Այդ ժամանակ չինացիները յարձակումն գործեցին, բայց պաշարվածները հանդիմանքի նրանց այնպիսի ճշտաճիգ հրացանաձգութեամբ, որ բոլոր զեւպանները և զինուորները չը դիմացան և յետ փախան՝ թողնելով զեւպանատան մօտ բազմաթիւ զիւղեր և վիրաւորվածներ: Պրինց Տուան վերջին յուսահատական ճիւղ գործ գրեց և հաւաքելով ցրված զօրքը՝ անձամբ նրա գլուխն անցած, յարձակվեց զեւպանատան վրա: Բայց առաջ քան թէ այս երկրորդ յարձակումը որ և է գործնական հետեւանք կուենանք՝ եւրոպացիներին օգնութեան հասան իշխան Չօինգ և զինեալ վան-Վինդ-Շաու:

«Տեղի ունեցաւ անկասկած կուի մանջուրների և չինացիների մէջ: Դժբաղդաբար Չօինգի զինուորներից շատերը անցան Տուանի կողմը: Ենթադրում են, որ պրինց Չօինգ սպանվեց այդ կուում, թէպէտ և նրա մարմինը չէ գտնված կուի տեղում: Երեւոյն 70-ամեայ զինեալ վանդ-Վինդ-Շաու յաղթվեց և նրա զօրքը ցրի ու ցան եղաւ: Գիւնդը վրա հասաւ, բայց չը դադարեցրեց յարձակումը: Մի քանի անգամ չինացիները յարձակում գործեցին զեւպանատան վրա, բայց յետ մղվեցին: Առաւօտեան 5 ժամին, երբ Տուանի զօրքերը յետ էին քշված բոլոր կէտերից, յանկարծ յարձակվող Տեանձինգի զինեալ Տուան-Յու-Սան: Չինական թնդանթները վերսկսեցին սպանել հրա-

ձգութիւնը և զեւպանատան շինութիւններից շատերը բոլորովին կործանվեցին:

«Պաշարվածներից շատերը սպանվեցին իրանց կեանքը պաշտպանելիս, իսկ միւսները թագկացան զեւպանատան կիսակործան շինութեան մէջ, որը աշխատում էին ամրացնել, որքան հնար ունէին:

«Վերջապէս պաշարվածների հրանիւթերը բոլորովին սպանվեցին և առաւօտեան 7 ժամին չինացիները հանդիմանք, որ եւրոպացիները այլ ևս անկարող են դիմադրել, ուստի և վճռեցին նոր յարձակում գործել:

«Այս զարհուրելի յարձակումը սկսվեց առաւօտեան: Եւրոպացիները յուսահատաբար կուում էին կուրծք առ կուրծք յարձակվողներին դէմ և սպանում էին բազմաթիւ չինացիների, բայց մի սպանվածի փոխարէն՝ բռնւում էին տասնաւորներ: Վերջ ի վերջոյ բոլոր պաշարվածները զազանաբար կոտորվեցին և ոչ մի մարդ անգամ չազատվեց կատաղած չինացիների ձեռքից:

ՆԱՄԱԿԱՆԵՐ ԶՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՑ

Պարիզ, յուլիսի 5-ին
Չինականից հետո չէ եւրոպական պալիւրոնը: Սա ներկայացնում է Հօնգո տաճարը, որը գտնվում է Եւպոնիայի հին մայրաքաղաքի՝ Նարայի մօտ: Այստեղ եղած եւրոպացիները հաւատացնում են, որ այս պալիւրոնը ինչեւ տաճարի հարազատ ընդօրինակութիւնն է և եւրոպական ճարտարապետութեան ընտիր նմանը:

Հօնգո նշանակում է «սուրբ տաճար», այսպէս է կոչվել նա իր գեղեցկութեան, հարեւատեման և շքեղութեան համար: Իրար վրա բարձրացող զոյգ կոտորները ազատ են թողնում մի լայն, սիրուն պատշգամբ, որ յենվում է կարմիր սիւնների վրա: Ենթիւ նրա կողմի թանգալները ներկայացնում են եւրոպական Ուիկտուոր, աստուածոհիններին, որոնք նուազում են երաժշտական գործիքներով, այս գործը պատրաստված է եւրոպացի մի քանդակագործի՝ Իգաիմայի ձեռքով, որն ապրում է Պարիզում: Լուսամուտների շուրջը քանդակված են սիրուն դրախտահաւեր, որոնց երկար պուշիւրը ձգվում կազմում են սիրուն արաքեաններ: Ենթիւ երկարութեան է և փառանք թէ արտաքուստ և թէ մանաւանդ ներքուստ Եւպոնիան ոչինչ չէ խնայել, որ իր այս պալիւրոնով եւրոպական մեծ և քաղաքակիրթ ազգերին հաւասար երեւայ և այդ նրան աջողվել է կատարելապէս: Այստեղ իշխող կարգն ու ճաշակը, առարկաների ընտրութիւնը, դասաւորութիւնը միանգամայն վայելում է քաղաքակիրթ ժողովրդի և Անգլիայի կամ Միացեալ-Նահանգների պալիւրոնների տպաւորութիւնն է գործում: Թէ եւրոպական կառավարութիւնը որ աստիճան ուշադիր է եղել դէպի իր երկրի փառքը, այդ երեւում է նրանից, որ թէ կայսրը, թէ կայսերական տան անդամները և թէ ազնւականներն ու մասնաւոր անձինք և ընկերութիւններ իրանց թանգապին հնութիւնների ժողովածուները, գեղարուեստի պատկանող զանազան հազուագիւտ իրեր ուղարկել են այս պալիւրոնում ի ցոյց դնելու համար: Եւրոպական պալիւրոնն այս պատճառով դարձել է մի գեղեցիկ թանգարան, ուր անաղիկ հարստութիւն կայ և մուտքը ազատ չէ. ներս մտնելու համար հարկաւոր է ունենալ առանձին տոմսակ կամ քանդակագործի թղթ:

Ստորին յարկում, ապակիով ծածկված պահարանների մէջ, դասաւորված են զանազան մեծութեան և ձեւի արկղեր, գրուկներ և սեղաններ՝ նստած մարդու առաջը դնելու համար, անուշահոտ իւղերի սերունդ արկղիկներ, հայելիների պատեաններ, փոքրիկ տուփեր բժշկական գործիքների և դեղերի համար, գրքերի դարակներ և այլն: Սրանք բոլորն էլ գեղարուեստական նուրբ գործեր են և չինված են զանազան ժամանակներում, եւթնութուրդ դարից սկսած մինչև ևս մեր օրերը: Այս իրերը պատրաստված են մի տեսակի գուրնուր խէժից և զարդարված սաղափի ձեւերով կամ կենդանիների և բոյսերի նկարներով: Մի պահարան պարունակում է զանազան արքաների սրբերը քանդակներով, նկարներով զարդարված. մի ուրիշի մէջ դրված են երկու զրահ, որոնք բոլորովին տարբեր ձեւ ունեն եւրոպայ անից և չինված են ոսկուց և սպիտակ մետաքսից: Կայ նաեւ եւրոպական դիւցազնութիւնից արձանների մի կողմից, որոնք բոլորն էլ փայտից են պատրաստված, սկսած 10-րդ դարից:

Երկրորդ յարկում դասաւորված են մետաքսի վրա պատրաստված նուրբ նկարները, որոնք

հին դարերից են մնացած և, իբրեւ հազուագիւտ նուրբ գործեր, խիստ թանկ են գնահատուած: Այս նկարներից մի քանիսը ներկայացնում են եւրոպական դիւցազնութեան զանազան տեսարաններ, եւրոպական դիւքեր, ուրիշներին իբրեւ նիւթ ծառայում է բնութիւնը:

Այս պալիւրոնի դէմուղէն է եւրոպական թէյատունը: Այստեղ մի եւրոպացի տիկին տեղական ձեւով թէյ է մատակարարում այցելուներին և ցոյց է տալիս իրանց թէյի հետաքրքիր սարքը: Մի փոքր աւելի հետո, մի ամբողջ շարք խանութների կազմում են եւրոպական շուկան, ուր վաճառվում են մեծ մասամբ լախնապակեայ մանր զարդեր, արձաններ, ամաններ, բաժակներ և հնութիւններ: Վաճառողները համարեա բոլորն էլ եւրոպացի տղա-մարդիկ և կանայք են. վերջինները դեռ կը բռնում են տեղական զեւպաններ, միայն գլխաւորաց են, սանրված եւրոպական ձեւով, պահում են իրանց ազատ, խօսում են, ծիծաղում, համարձակ չըլնում միայնակ: Տղամարդիկ անխոր եւրոպական զգեստ ունեն, վերջին ճաշակով կարված. նրանք խօսում են ֆրանսերէն և մանաւանդ՝ շատ լաւ անգլիերէն: Մտածկոտ, հետաքրքիր դէմքեր են, կարծես փիլիսոփաներ լինեն, քիչ են խօսում, շատ են դիտում, շատ խորում: Իսկ և իսկ ընդօրինակող, սովորող ժողովուրդ, որոնց մանր խորամիտ աչքերը, կարծես, շարունակ մի բան են փնտռում սովորելու, նմանվելու համար:

Անշուշտ այսպէսով չէ վերջանում եւրոպական քաժինը ցուցահանդէսում, և երբ առիթ ներկայանայ, արդիւնաբերութեան և արհեստների միւս ճիւղերի մասին եւս կաշխատեմ գրել, բայց այս պալիւրոնն անգամ, առանց միւս մասերի, բաւական է հստակապէս համար այն զարմանալի կուտուրակոն թոյլքը, որ վերջին կէս դարում կատարեց եւրոպական ազգը:

Ա. Ահարոնեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Россия» լրագրի Կ. Պոսի թղթակիցը յունիսի 8-ի թղթակցութեան մէջ, ի միջի այլոց, գրում է հետեւեալը. «Մօտ օրերուս Կ. Պոսի ռուսաց զեւպանատունը դիմեց Բ. Դրանը մի յայտագրով, որ բաւականաչափ պահանջաւոր Սուլթանի կառավարութեան ուշադրութիւնն է դարձնում լուսաւորական հայերի ցաւալի դրութեան վրա Անատոլիական ծովեզերքի մի քանի ամառայիններում, մանաւանդ Հեքքեարի և Սիւրդի ամառայիններում: Այնտեղի հայերից շատերը, հարկանքների պատճառած նեղութիւններից ազատվելու համար, վրձնող են նոյն իսկ ամառայիններում ընդունել: Ամբողջ հայ գիւղեր, նոյն պատճառներից զրգված, պատրաստվում են գաղթել Ռուսաստան: Ռուսաց զեւպանատունը իր յայտագրի մէջ մատնացոյց է անում ևս այն դժուարութիւնները, որ կրում են տեղական առեւտրականները ընդհանրապէս և առանձնապէս հայ վաճառականները գրկված լինելով ազատ տեղափոխութեան իրաւունքից երկրի մէջ: Բայց զրանից այն հայերին, որոնք իրանց անձնական գործերով գնում են Ռուսաստան, վաճառականապէս արգելվում է այժմ վերադառնալ թիւթաքիս: Յայտագրի եզրակացութեան մէջ զեւպանութիւնը, ռուսաց կառավարութեան կողմից, ցանկութիւն է յայտնում, որ այդ ևս դրա նրան ուրիշ արգելքներ անցաւոր վերացվեն: Առաջին բանը, որ մտածեց անկ Բ. Դրանը, հաշտութիւնն էր հայերի պատրիարք Օրմանեանի հետ, որ իր կողմից երեք պայման առաջարկեց. — առաջին՝ թղթապետի կատարել Սոսի կաթողիկոսական ընտրութիւնը՝ համաձայն հայոց եկեղեցու կանոնական կարգերի, երկրորդ՝ ազատել չքաւոր հայերին, մի քանի տարվայ ընթացքում, զինուորական հարկից, երրորդ՝ թոյլ տալ հայերին, միւս թիւթաքիս հպատակների նման, ազատօրէն տեղափոխվել թէ պետութեան սահմաններում և թէ այդ սահմաններից դուրս: Թիւթաքի կառավարութեան հետ այս հարցի վերաբերմամբ բանակցութիւններ վարելու ժամանակ, պատրիարքը համար ամենակրօնական քաղաքի քաղաքի, նրան այցելեց ռուսաց զեւպանատան առաջին թարգման պ. Մաքսիմով և մի ժամից աւելի խօսակցութիւն ունեցաւ նրա հետ: Օրմանեանի խօսքով, որ նա հազարից աւել բարձրաստիճան եկեղեցականների ժողովում, պ. Մաքսիմով յայտնել է նրան, թէ ռուսաց կառավարութիւնը հաստատուէ վճռել է այս անգամ ստիպել Բ. Դրանը, որ նա այս կամ այն կերպ վերջ դնէ հայկական նահանգներում սուր կերպարանք ստացած անկարգութիւններին: Բ. Դրանը առաջարկեց ռուսաց զեւպանատանը առանձին յանձնաժողով նշանակել հայոց հարցի վերաբերմամբ: Յանձնաժողովի մէջ, բայց երեք թիւթաքի բարձրաստիճան անձերից, մտաւ նաեւ պ. Մաքսիմով: Յանձնաժողովի ջանքը պէտք է լինի լուծել հայոց հարցը յուրաքանչիւր ևս միջոցով: Բայց այդ հարցը անլուծելի եղել է և կը լինի, ուստի որ և է գործնական հետեւանք այդ յանձնաժողովից աւելորդ է սպասել: Այսու ամենայնիւ, յանձնաժողովի անկարգութիւնը կը շարունակուի, որոնք
